ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՐԺԱՆԱՇՆՈՐՀ Տ. ԱՐՄԵՆԱԿ-ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՎԱՋԳԷՆ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾԼՑ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ, ԾԱՑՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՑՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՑՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԱՐԺԱՆԱՇՆՈՐՀ Տ. ԱՐՄԵՆԱԿ-ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅԻ ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, Ի ԳԱՀԷՆ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Սիրով ընդառաջելով հունահայ թեմական խորհուրդի և հավատացյալ ժողովուրդի խնդրանքին ու գնահատելով երկար տարիներու Ձեր աստվածասեր գործունեությունը իբրև հոգևոր հովիվ հունահայ ժողովուրդի, այլև նկատի ունենալով Ձեր եկեղեցաշեն հավատարմությունը դեպի մեր Հայաստանյայց եկեղեցվո կանոնները և ավանդությունները, Ձեզ կլիազորենք առաջնորդելու հունահայ ամբողջ հավատացյալ ժողովուրդը անխտիր, իբրև թեմական առաջնորդի տեղապահ, գործակցաբար թեմական խորհուրդի հետ, համաձայն մեր Ս. եկեղեցվո կարգերուն և կանոններուն և համաձայն Ձեր երկրի՝ բարեխնամ Հունաստանի պետական օրենքներուն:

Միաժամանակ Ձեզ կշնորհենք լանջախաչ կրելու իրավունք՝ ի մխիթարություն Ձեր հավատացյալ հոտի և ի քաջալերություն Ձեզ:

Ձեզ վստահելով հունահայ բոլոր հայ եկեղեցիներու և հավատացյալներու հոգևոր ղեկավարությունը, կհորդորենք Ձեզ, որ ավետարանական ոգիով սեր և խաղաղություն քարոզեք ամենուն և վերահաստատեք միությունը ժողովուրդի ծոցին մեջ Ձեր օրինավոր իշխանության ներքև, հեռու պահելով հայ հավատացյալները հերձվածող, եկեղեցահանդ ձեռքերե, որոնք ոչ մեկ հոգևոր իշխանություն չունին Հայաստանյայց Առաքելական Ուղղափառ եկեղեցվո և անոր հավատացյալ ժողովուրդին վրա:

Ձեզ պատվեր կուտանք նաև, որ մեր Ս. եկեղեցին հեռու պահեք քաղաքական-կուսակցական փորձություններե, մնալով հավատարիմ Ձեր հյուրընկալ Հայրենիքին, տիրախնամ Հելլադայի օրենքներուն և շահերուն: Ձեր պարտքը նկատեցեք մեր ժողովուրդին քարոզել՝ որպեսզի անոնք բոլորը ըլլան օրինապահ, պարկեշտ ու շինարար քաղաքացիները իրենց բնակած երկրին:

Ձեզ լիակատար հաջողություն մաղթելով Ձեր նոր պաշտոնին ու սուրբ գործին մեջ Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն, Ձեզ և թեմական խորհուրդի, քահանայից դասուն և համայն հունահայ ժողովուրդին կնդրեմ Մեր սիրո ողջույնը և հայրապետական օրհնությունը:

«ՈՂՋ ԼԵՐՈՒՔ, ՁՕՐԱՑԵԱԼ Ս. ՀՈԳԻՈՎ ԵՒ ՕՐՀՆԵԱԼ Ի ՏԵԱՌՆԷ ԵՒ Ի ՄԷՆՋ, ԱՄԷՆ»:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս յ-7-ն յունուարի
1959 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԸ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի: